

ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ, ԴՐԱ ԱՆԱԼՈՂՆԵՐԻ
ԿԻՐԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Նոննա Մանուկյան

Քանալի բառեր^{*} համագործակցություն, վարույթ, արդարադատություն, գործարք, մեղքի ընդունում, համաձայնագիր:

Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի և դրա հետ կապված դատական քննության հատուկ կարգի ինստիտուտը ներդրված է Հայաստանի Հանրապետության գործող քրեական դատավարության օրենսգրքում, սակայն այն՝ որպես առանձին վարույթի տեսակ, իր ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, որի 56-րդ գլուխը ամբողջությամբ նվիրված է այս ինստիտուտին [1]: Ներկայումս արտասահմանյան շատ երկրներ որդեգրել են օպտիմալացման ճանապարհը՝ հետևողականորեն քրեական դատավարություն ներմուծելով տարբերակված վարույթները, որոնք հնարավորություն են տալիս կրճատել մինչդատական վարույթը՝ խնայելով բավականին մեծ ռեսուրսներ: Դատավարական ձևի պարզեցումը՝ ինչպես հանցագործություններին առավել արագ և օպերատիվ արձագանքելու, այնպես էլ առավելագույն տնտեսման պայմաններում քրեական գործն արագ և արդյունավետ քննելու և լուծելու նպատակ է հետապնդում:

Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտը՝ տարբեր մոդելների դրսևորումներով, առկա է արտասահմանյան երկրների իրավական համակարգում և ունի մեծ նշանակություն, ուստի անհրաժեշտ է ուսումնասիրել այդ երկրների համապատասխան օրենսդրությունը և իրավակիրառ գործունեությունը՝ վերցնելով տարիների ընթացքում վերջիններիս կողմից այս ուղղությամբ կուտակված դրական և արդյունավետ փորձը՝ այն ազգային օրենսդրությունում ներդնելու նպատակով, իհարկե՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության մշակման առանձնահատկությունները:

Համագործակցության վարույթի ինստիտուտը քրեական դատավարության և մասամբ նյութական իրավունքի տարր է, այն ներառում է իր մեջ իրավական նորմերի համակցություն, որոնք կարգավորում են՝ կասկածյալի կամ մեղադրյալի կողմից համագործակցության մինչդատական համաձայնագիր կնքելու վերաբերյալ ներկայացված միջնորդության և դրա հետագա իրացման ընթացքում ծագող հասարակական, իրավական հարաբերությունները: Ընդհանուր առմամբ, այս ինստիտուտը հիմնված է կասկածյալի կամ մեղադրյալի կողմից կամավոր ստանձնած պարտավորության վրա, այն է՝ նպատակ է հանցագործության բացահայտմանը, հանցակիցների մերկացմանը, հանցագործության արդյունքում ձեռք բերված գույքի որոնմանը՝ ակնկալելով դրա դիմաց արարքի համար քրեական օրենսգրքով սահմանված պատժի զգալի կրճատում:

Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը գիտական գրականության մեջ հաճախ դիտարկվում է՝ որպես հանցավորության դեմ պայքարի կոմպրոմիսային կոնցեպցիայի բաղկացուցիչ մաս [2]: Ըստ Խ. Դ. Ալիկալերովի և Մ. Ա. Ջեյնալովի՝ հանցավորության դեմ պայքարի կոմպրոմիս ասելիս անհրաժեշտ է հաս-

* Հոդվածն ընդունվել է 30.09.21:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ի.գ.դ., պրոֆեսոր Ս. Շաղիկյանը: 08.10.21:

կանալ օրենսդիր մարմնի հետևյալ ձգտումները՝ որոշ քաղաքացիների հետաքրքրել՝ հանցավորության դեմ պայքարում ակտիվ մասնակցություն ցուցաբերել, մյուսներին՝ հակել կամավոր կերպով հրաժարվել հանցագործության կատարումից, իսկ նրանք, ովքեր արդեն կատարել են հանցավոր արարք՝ համագործակցել քրեական արդարադատության մարմինների հետ՝ դրա դիմաց անվերապահորեն ազատվելով քրեական պատասխանատվությունից կամ ունենալ պատժի նվազեցում [3]:

Որոշ գիտնականներ համագործակցության վարույթի ինստիտուտը վերագրում են քրեական դատավարության արագացված, մյուսները՝ պարզեցված ձևերին, իսկ մի մասն էլ, այն դիտում են որպես համաձայնեցման ընթացակարգ:

Կասկածյալի կամ մեղադրյալի կողմից արդարադատության հետ համագործակցության համաձայնագրի կնքումն առաջին անգամ սահմանվել և լայնորեն կիրառվել է արտասահմանյան քրեական դատավարության համակարգերում, որոնք կրել են «Գործարք արդարադատության հետ», ինչպես նաև՝ «Մեղքի ընդունման գործարք» /plea bargaining/ անվանումները:

Անգլո-սաքսոնական իրավունքի համակարգի երկրներում քրեական դատավարության պարզեցված ընթացակարգերի ներդրման միտումը սկսվել է դրա օրենսդրական ամրագրում ստանալուց բավականին վաղ ժամանակահատվածում [4]:

«Արդարադատության հետ գործարք» հասկացությունը ժամանակակից իրավական ընկալման իմաստով, ԱՄՆ-ում ծագել է ավելի քան 100 տարի առաջ: Այսպիսով, դեռ 19-րդ դարում, մեղադրյալի կողմից մեղքի ընդունման պարագայում, գործում առկա ապացույցները չէին հետազոտվում, իսկ ձևավորված երդվյալ ատենակալներն արծակվում էին:

ԱՄՆ-ում գործարքների կնքման հնարավորությունը պայմանավորված է «հայցային» ձևով, որտեղ մեղադրանքն ընկալվում է՝ որպես իշխանությունների կողմից ներկայացված «հայց», դատախազի և մեղադրյալի միջև ծագած «վեճ», որը կարող է վերացվել՝ վերջինիս կողմից մեղքի ընդունմամբ: Այս վիճաբանությունում դատարանը հանդես է գալիս երրորդ կողմի դերում՝ վերահսկողություն իրականացնելով սահմանված բոլոր ընթացակարգերի պահպանման նկատմամբ, որոշելով մեղավորության և նշանակվող պատժաչափին վերաբերելի հարցերը:

«Մեղքի ընդունման գործարքները» պաշտոնապես ամրագրվել են նաև դատական նախադեպով, մասնավորապես՝ Սանթոբելլոն ընդդեմ Նյու Յորքի գործով Միացյալ Նահանգների Գերագույն դատարանի կողմից 1971թ. կայացված որոշմամբ, որով «plea bargaining» ձանաչվել է «իրավական կյանքի անհրաժեշտություն»: Հետագայում, 1974 թվականին հաստատվեցին ԱՄՆ քրեական դատավարության դաշնային կանոնակարգի 11-րդ կանոնի փոփոխությունները, նախատեսելով ձգտել բոլոր քրեադատավարական գործընթացների պարզեցման ընթացակարգին, գործի անաչառ քննությանը, ինչպես նաև՝ չարդարացված ծախսերի և ուշացումների վերացմանը:

Մեղքի ընդունման համաձայնագիրը /plea bargaining/ օրենքով թույլատրելի գրավոր գործարք է մեղադրյալի, նրա պաշտպանի և դատախազի միջև, որում մեղադրյալի (ամբաստանյալի) կողմից պակաս ծանրություն ունեցող հանցանքի մեջ մեղքի ընդունման դիմաց՝ դատախազը հրաժարվում է գործի հանգամանքների բազմակողմանի, համապարփակ քննությունից: Հազվադեպ չեն այն դեպքերը, երբ գործարքը հանգեցնում է դատախազի կողմից հանցագործության մեկ կամ մի քանի դրվագներից հրաժարվելուն կամ առաջադրված մեղադրանքի վերադարձմանը՝ մեղադրյալի կողմից միաժամանակ այլ հանցավոր արարքներում իր մեղավորության ընդունման պարագայում:

Համաձայնվելով դատախազի հետ գործարքի կնքմանը՝ մեղադրյալն, իրապես, կամավոր հրաժարվում է ԱՄՆ Սահմանադրությամբ երաշխավորված մի շարք իրա-

վունքներից և առաջին հերթին երդվյալ ատենակալների կողմից գործի քննության երաշխիքից:

Իրավակիրառ պրակտիկայում գործարքի կնքման հետ կապված բավականին լուրջ խնդիրներ են առաջանում՝ մեղադրյալի իրավունքների տեսանկյունից:

Մեղադրյալին՝ մեղքի ընդունման ամերիկյան գործարքի կնքմանը դրդում են ամենուր հանդիպող այնպիսի փաստերը, ինչպիսիք են՝ դատախազի կողմից ներկայացված մեղադրանքի ծավալի ուռճացումը՝ հետագայում պաշտպանության կողմից ավելի մեծ զիջումներ կորզելու նպատակով:

Հազվադեպ չեն, երբ, հանցագործությունների համակցության բացակայության պայմաններում մեղադրյալի նույն գործողությունները՝ չնայած օրենքին, որակվում են մի քանի հոդվածներով, բացի այդ՝ մեղադրանքի մեջ են ներառվում նաև այնպիսի արարքների վերագրում, որոնք քրեական հետապնդման ենթակա անծը չի կատարել: Նման իրավիճակում, մեղադրյալը կանգնում է դժվար ընտրության առջև. ընդունել իրեն առաջադրված մեղադրանքների չափազանց մեծ ծավալի մեղավորությունը կամ դատարանի առջև կանգնել այն արարքների համար, որոնց կատարմանը նա ընդհանրապես մասնակից չի եղել: Նշված խնդրի գոյությունը հաստատվել է ԱՄՆ-ում՝ Արդարադատության խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվող ինստիտուտի կողմից [5]:

«Արդարադատության հետ գործարքների» առաջացման հիմնական պատճառը, ըստ Բ. Ստեֆանուսի՝ ուշադրություն կենտրոնացումն է այնպիսի դատավարական կարևոր արժեքների վրա, ինչպիսիք են՝ «արագությունը, գինը, կամքի ազատ արտահայտումը, ճշգրտությունն ու որոշակիությունը» [6]: Այս առումով, Ֆ. Փեյթքերուկը, Ռ. Սքոթը և Վ. Ստունցը «Արդարության հետ գործարքը» անվանում են իրավունքի «առք և վաճառք», որն ապահովում է անկախություն և արդյունավետություն, նվազեցնում անորոշությունը, խնայում ժամանակը և գումարը [7]:

Քննադատելով նման ինստիտուտը՝ Թ. Լինչը նշում է, որ «Արդարադատության հետ գործարքի» կիրառումը, իսկապես, արագացնում է քրեական դատավարության ընթացքը, բայց դա արվում է հակասահմանադրական եղանակով, իսկ մեկ այլ հեղինակ՝ Վ. Կինսլին իր՝ «Ինչու են խոստովանում անմեղ մարդիկ» հոդվածում ուշադրությունը հրավիրում է այն փաստի վրա, որ «ստեղծելով նման տարբերակ՝ ամերիկյան համակարգն անմեղ անձանց դրդում է խոստովանել այն, ինչը չեն արել» [8]:

Քրեական դատավարության տարատեսակ գործարքները ծանոթ են Անգլիական արդարադատությանը՝ միջնադարից ի վեր: Այդ ժամանակ գոյություն ունեցող «զղջացողի վերաքննության» ինստիտուտը նախատեսում էր մահապատիժ սահմանված հանցավոր արարք կատարած անձին «Կյանք նվիրելու» հնարավորություն՝ հանցագործություն կատարած այլ անձանց բացահայտելու պարագայում: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այս պրակտիկայի կիրառումը ցույց տվեց իր անարդյունավետությունը, քանի որ հազվադեպ չէին դեպքերը, երբ մեղադրյալը ներման արժանանալու համար զրպարտում էր լիովեն անմեղ անձանց:

Անգլիական քրեական դատավարության իրավունքում այս դատավարական ինստիտուտը կիրառվում է շատ ավելի քիչ չափով, ինչը պայմանավորված է համաձայնագրի կողմերի միջև բանակցային գործընթացում դատավորների մասնակցության հարցի վերաբերյալ բրիտանական բարձրագույն դատական իշխանությունների կողմից արտահայտված բացասական վերաբերմունքով:

Ժամանակակից Անգլիայի քրեական դատավարությունում տարատեսակ գործարքների կիրառումը կոչվում է ընդհանուր վարույթ, իսկ մեղադրյալի կողմից մեղքը չընդունելու պարագայում, քրեական գործը քննվում է հատուկ մասնագետների/նազիստորոնների/ կողմից՝ ընդհանուր կարգով:

Անգլիայում օգտագործվում է քրեական գործերի հեռակա քննությունը: Օրենքի պահանջներին համաձայն՝ իր մեղավորությունն ընդունած մեղադրյալն իրավունք ունի

համաձայնություն հայտնել՝ իր բացակայությամբ՝ գրավոր եղանակով գործի քննությունն իրականացնելու վերաբերյալ և այդ մասին իրազեկել դատարանին: Հեռակա քննության իսնտիտուտը գերծ չէ իրավակիրառ պրակտիկայում առաջացող խնդիրներից: Հեռակա քննությունը չի կարող կիրառվել այն քրեական գործերով, որոնց համար նախատեսված է ազատագրկման ձևով պատիժ: Եթե դատարանը գա եզրահանգման, որ մեղադրյալի նկատմամբ ազատագրկման ձևով պատիժ կամ իրավունքների սահմանափակում է կիրառվելու, ապա՝ դատարանը վերջինիս հրավիրում է դատական նիստին [9]:

Ի տարբերություն Անգլիայի և ԱՄՆ-ի՝ մայրցամաքային եվրոպական երկրներն ա-վելի զգուշավոր մոտեցում են ցուցաբերում «Մեղքի ընդունման գործարքի» ինստի-տուտի կիրառման հարցում: Դա պայմանավորված է նշված դատական համակարգե-րում քրեական դատավարության մոդելների ակնհայտ տարբերությամբ: Մայրցամա-քային եվրոպայի երկրներին բնութագրական է դատավարության խառը տիպը, որը համադրում է իր մեջ նախնական քննության հետաքննության ձևը և մրցակցային դա-տավարությունը: Միևնույն ժամանակ, մրցակցային սկզբունքը մեկնաբանվում է այլ կերպ, քան անգլո-ամերիկյան իրավունքում:

Գերմանիայի քրեական դատավարությունում գործարքներն իրենց պաշտոնական ամրագրումն են ստացել դեռևս 1984 թվականին: Երկար ժամանակ Գերմանիային հայտնի չէին քրեական դատավարության պարզեցված ընթացակարգերը, իսկ քրեա-կան դատավարությունը զարգանում էր ապացույցների բազմակողմանի ուսումնասի-րության ուղով: Այնուհանդերձ, ԳՂՀ-ում կիրառվում էր քննությունն իրականացնող մարմինների հետ ակտիվորեն համագործակցող անձի նկատմամբ պատիժը մեղմաց-նելու կամ նրան քրեական պատասխանատվությունից ազատելու պրակտիկան՝ մե-ղադրանքի կողմի վկան դարձնելու միջոցով [10]:

ԳՂՀ-ում «Արդարադատության հետ գործարքի» իրավական ինստիտուտն ուղ-ղակիրթն չէր ձևաաչվում դատավարական օրենսդրությամբ, բայց միևնույն ժամանակ չէր կոտրում քրեական դատավարության միջավայրում ստեղծված արժեքային մոտե-ցումը: «Արդարադատության հետ գործարքի» այս նորաստեղծ իրավական ինստի-տուտը չփոխեց դատավարության մասնակիցների դերը: Գերակա իրավասությամբ շարունակում էր օժտված լինել դատավորը, ով որոշում էր կայացնում գործի նյութերի վերաբերյալ իր անձնական կարծիքի և վերագրվող արարքների ապացուցվածության հիման վրա, իսկ մեղադրանքի և պաշտպանության կողմը հետին պլանում են, ինչը նշանակում էր քրեական դատավարության քննչական բնույթի պահպանումը: «Գոր-ծարքի» կնքման հիմնական պայմանը մեղադրյալի կողմից իրեն վերագրվող մեղադ-րանքի ամբողջական ընդունումն է:

Հետագուտող Զ. Լենգբեյնն իր աշխատանքներից մեկում ԳՂՀ-ն անվանել է երկիր «առանց արդարադատության հետ գործարքի», և դա հաստատում էր այդ ժամանա-կահատվածում գործող դատավարական իրավունքը կարգավորող նորմատիվ իրա-վական դաշտը: Այս մոտեցումն ուներ բազմաթիվ աջակիցներ:

«Absprachen» ինստիտուտի վերաբերյալ գոյություն ունեին այլ կարծիքներ (հա-մաձայնագիրը ենթադրվում էր ինչպես գործի քննության մեկնարկից անմիջապես առաջ, այնպես էլ դատական նիստի ընթացքում): Գիտական շրջանակներում ավելի ու ավելի հաճախ սկսեցին քննարկել արևմտյան իրավական ինստիտուտի փոխառույթ-յան հարցը: «Արդարադատության հետ գործարքի» կողմնակիցներն արդեն սկսել էին խոսել դրա տեսակների/տարբերակների մասին, որոնք միավորվում էին մեկ հայեցա-կարգով: Դատական նիստին նախապատրաստվելու կամ անմիջապես դատական նիստի ընթացում, ամբաստանյալը կարող է առաջարկել իր խոստովանությունը՝ դա-տավորի կողմից տրված երաշխիքի դիմաց, այն է՝ պատիժը չի գերազանցելու որոշա-կի սահմաններ կամ դատախազը հրաժարվելու է մեղադրանքի որոշ մասից:

Ժամանակակից գերմանական օրենսդրությունն ընդգրկում է պարզեցված ընթացակարգի երկու տեսակարազանցված քննություն (das beschleunigte Verfahren) և դատարանի որոշում (das Strafbefehlsverfahren): Նախքան մեղադրանք առաջադրելը, դատախազը ստուգում է կոնկրետ դեպքում արագացված քննության կամ դատարանի որոշման կիրառման հնարավորությունը, և միայն դատական ընթացակարգերի պարզեցման համար անհրաժեշտ պայմանների բացակայության դեպքում, քրեական գործը քննվում է դատական քննության ընդհանուր ընթացակարգով [11]:

Գերմանիայում քրեական դատավարության պարզեցված կարգը կիրառվում է միայն գործի դատական քննության փուլում: Քրեական գործի քննությունը միշտ իրականացվում է ընդհանուր կարգով:

Գերմանիայում գոյություն ունի նաև քրեադատավարական ընթացակարգ, որը կոչված է հանցագործության դեմ պայքարին նպաստելու՝ հանցագործության հանցակիցներին համագործակցության ներգրավելու միջոցով: Ի տարբերություն համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի՝ օրինակ՝ ռուսական ինստիտուտի, Գերմանիայում սակարկությունների առարկա է հանդիսանում ոչ թե արարքի համար պատժի նվազեցման հնարավորությունը, այլ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու փաստը:

Գերմանիայի Ղաշնային Հանրապետության քրեական օրենսգրքի 129-րդ հոդվածը նախատեսում է քրեական պատասխանատվությունից ազատել կազմակերպված հանցավոր խմբերի անդամներին, եթե վերջիններս կամավոր և անհապաղ հաղորդել են իրենց դերի և ծրագրված հանցագործությունների մասին: Օրենքի այս դրույթն ապացուցել է իր արդյունավետությունը և հանդիսանում է կազմակերպված հանցավորության դեմ պայքարի արդյունավետ գործիք:

Գերմանական տարբերակի հետաքրքիր առանձնահատկություններից է նաև մինչև «գործարքի» կնքումը, մինչգործով կայանալիք լսումները, ամբաստանյալը կարող է ծանոթանալ գործի նյութերին և հետևաբար, ստանալ ամբողջական տեղեկատվություն մեղադրող կողմի ապացուցողական բազայի վերաբերյալ, այդպիսով՝ իրատեսորեն գնահատելով իր շանսերը կայանալիք բանակցություններում [12]:

«Արդարադատության հետ գործարքի» (patteggiamento—«պատժի նշանակում») իրավական ինստիտուտի իտալական տարբերակը բավականին մեծ ժառանգություն է ստացել ամերիկյան նախնական մոդելից:

Իտալիայում կա իր նշանակությամբ համագործակցության մինչդատական համաձայնագրին նման մեկ օրինակ, որն ուղղված է մեղադրյալներին հանցագործության հանցակիցների բացահայտման գործընթացին ներգրավելուն —գործարք «pentito» /կազմակերպված հանցավոր խմբերի մեղքն ընդունած/զղջացող անդամ/ի հետ: Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ անձինք, ովքեր ցանկություն են հայտնել ցուցմունք տալ կազմակերպված խմբերի և հանցավոր համագործակցությունների անդամների դեմ, իրենց կողմից ստանձնած պարտավորությունները կատարելու պարագայում, դատապարտվում են համապատասխան հոդվածով սահմանված առավելագույն պատժաչափից հնգապատիկ նվազ չափով: Նման միջոցը նախատեսված է իտալական մաֆիայի դեմ պայքարելու համար, որի գործունեությունը ներթափանցել է Իտալիայի հասարակայնության բոլոր շերտեր:

Իտալիայի քրեական դատավարության օրենսդրության համաձայն՝ «Արդարադատության հետ գործարքի»՝ որպես իրավական ինստիտուտի, առանձնահատկությունները հետևյալն են. համաձայնագրի էությունը կարող է ընդգրկել միայն բուն դատավճիռը,բայց ոչ առաջադրված մեղադրանքից մասնակի կամ ամբողջական իրաժարումը: «Գործարքը» կայանում է դատարանին կոնկրետ վճիռ կայացնելու վերաբերյալ միջնորդության ներկայացմամբ, որի պարագայում ամբաստանյալը իրաժարվում է դատարանի կողմից գործը քննելու իր իրավունքից և համարվում է մեղավորությունը ըն-

դուռնա՝ Միննույն ժամանակ, դատավորը, գործի նյութերին ծանոթանալով, կարող է արդարացնել ամբաստանյալին՝ նախքան համաձայնագրի հաստատումը (հոդված 444.2): Եթե դատախազը չի համաձայնվում ամբաստանյալի հետ գործարքի կնքմանը, ապա ամբաստանյալը, գործը լսելուց հետո, կարող է միջնորդել դատավորին ուսումնասիրել այն պատճառները, որոնք հիմք են հանդիսացել նման համաձայնագիրը մերժելու համար և խնդրել դատավորին կրճատել պատժաչափը մեկ երրորդով (հոդված 448.1) [13]:

Այսպիսով՝ «Արդարադատության հետ գործարքի» իրավական ինստիտուտի իտալական տարբերակը շատ առումներով նման է ամերիկյան մոդելին. ակտիվ կողմերը (նրանք ուղղակիորեն վարում են բանակցային գործընթացը) մեղադրանքի և պաշտպանության կողմերն են, իսկ համեմատաբար պասիվ՝ դատավորը: Նման «գործարքները» շարունակում են ակտիվորեն օգտագործվել Իտալիայի դատավարական ընթացակարգերում:

Իսպանիայի, Իտալիայի (Իսպանիայի քրեական դատավարության օրենսգիրք, 1882թ. 23.12.1988 խմբ., հոդված 655, 694 – 700), Պորտուգալիայի (Պորտուգալիայի քրեական դատավարության օրենսգիրք, 1987թ., հոդված 392) և մի շարք այլ արևմտյան պետություններում քրեական դատավարության պարզեցված ընթացակարգերը համարվում են մեղադրանքի հետ համաձայնության գործարք: Նրանց առարկան, ի տարբերություն մյուս անալոգի, հանդիսանում է մեղքի ձևական ընդունումը [14]:

Իսրայելում լայնորեն օգտագործվում են «մեղքի ընդունման գործարքները» [15], որոնք նախատեսում են կողմերի միջև համաձայնագիր կնքելու հնարավորություն, որը կարող է վերաբերել մեղադրական եզրակացության բովանդակությանը, հանցանքի համար սահմանված պատժաչափին, ինչպես նաև՝ դատախազին և մեղադրյալին հետաքրքրող այլ հարցերի: Հնարավոր պատժի մեղմացման դիմաց՝ մեղադրյալը պարտավորվում է դատարանում ընդունել մեղադրական եզրակացության մեջ նշված բոլոր փաստերը և կատարել կնքված համաձայնագրի մյուս պայմանները: Կողմերն իրավունք ունեն հրաժարվել գործարքից ցանկացած փուլում՝ մինչև դատարանի կողմից վերջնական որոշման կայացումը: Քրեական գործի քննության ընթացքում դատարանը պետք է համոզվի, որ համաձայնագրի կնքումը եղել է կամավոր քայլ, իսկ քրեական պատասխանատվության ենթարկված անձն ամբողջությամբ հասկանում ու ընդունում է դրա բովանդակությունը և առաջացող հետևանքները:

Իսրայելի քրեական դատավարության ինստիտուտը շատ առումներով նման է Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 40¹ գլուխով կարգավորվող ինստիտուտին: Ի տարբերություն համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ռուսական մոդելի՝ Իսրայելում գործարքի թույլատրելիության վերաբերյալ որոշում կայացնելիս հաշվի է առնվում տուժողի կարծիքը:

Բացի այդ, Իսրայելում կիրառվող մեղքի ընդունման գործարքի ինստիտուտը հնարավորություն է ընձեռում կողմերին համաձայնություն ձեռք բերել դատարանի կողմից նշանակվող պատժի առավելագույն չափի և տեսակի վերաբերյալ, ինչն արգելված է ՌԴ քրեական դատավարության օրենսդրությամբ: Իսրայելում գործարքի կնքումը չի ենթադրում պաշտպանի պարտադիր մասնակցություն քրեական գործին: Եթե գործարքը կիրառվում է քրեական դատավարության դատական փուլում, կողմերն իրավունք ունեն գրավոր համաձայնություն չձևակերպել, այլ՝ միայն համաձայնագրի արդյունքներն ամրագրել դատական նիստի արձանագրության մեջ: Իսրայելական գործարքի սուբյեկտն իրավունք չունի քրեական գործն ըստ էության քննելուց հետո հրաժարվել իր կողմից նախկինում կատարված խոստովանությունից, մինչդեռ ըստ Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 40-րդ գլխի, մեղադրյալը կարող է հրաժարվել իր խոստովանությունից, նույնիսկ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելուց հետո [16]:

Մեղքի ընդունման գործարքն Իսրայելում կնքում են մինչև 80 տոկոս մեղադրյալները, ինչն էականորեն նվազեցնում է դատարանների ծանրաբեռնվածությունը [17]:

Հետաքրքիր են նաև համագործակցության վարույթի ինստիտուտի օրենսդրական կարգավորումները և մոդելները ԱՊՀ երկրներում:

Ղազախստանի քրեական դատավարության իրավունքում կիրառվում է համագործակցության վերաբերյալ համաձայնության ինստիտուտը, որը բավականին նման է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 40¹ հոդվածով սահմանված ընթացակարգին: Ղազախստանի քրեական դատավարության օրենսգրքի 612-րդ հոդվածը /04.07.2014թ./ հնարավորություն է տալիս բոլոր տեսակի հանցագործությունների վերաբերյալ համաձայնագրի կնքման [18]: Ի տարբերություն ռուսական մինչդատական համաձայնագրի՝ Ղազախստանում այս ինստիտուտն օգտագործվում է ոչ միայն հանցակցությանը կատարված քրեական գործերով, այլ նաև օգտագործվում է առանձնապես ծանր, էքստրեմիստական, ահաբեկչական բնույթի հանցագործությունների բացահայտման նպատակով, որոնց համագործակցող մեղադրյալը որևէ առնչություն չունի: Համաձայնագիրը կարող է կնքվել նաև անչափահաս անձի հետ [19]:

Մեղքի ընդունման գործարքի ուկրաինական տարբերակի և համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ռուսական ինստիտուտի հիմնական տարբերությունը դրանց նպատակն են: Համագործակցության վարույթի նպատակը հանցագործությունների բացահայտումը և քննությունն է, իսկ առարկան՝ մեղադրյալի կոնկրետ գործողությունները, որոնք ուղղված են իրավապահ մարմիններին օժանդակելուն՝ հանցագործության բացահայտման, քննության, հանցակիցների հայտնաբերման և հանցավոր ճանապարհով ստացված գույքի հետախուզման նպատակով: ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 40¹ հոդվածը, ի տարբերություն Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի, հնարավոր չի համարում մեղադրանքի անհիմն փոփոխությունը կամ մասնակի հրաժարումը դրանից՝ մեղադրյալի կողմից իրեն մեղսագրվող արարքներն ընդունելու դիմաց: Ուկրաինական մոդելը փաստացի հանդիսանում է ամերիկյան մոդելի՝ մեղքի ընդունման գործարքի ածանցյալ:

Այս մոդելի՝ մեղքի ընդունման վերաբերյալ համաձայնագրում նշվում են դրա կողմերը, կասկածի կամ մեղադրանքի ձևակերպումը, դրա իրավական որակումը, կասկածյալի (մեղադրյալի) կողմից մեղքի անվերապահ ընդունման փաստը, այլ անձի կողմից կատարված հանցագործությունը բացահայտելուն ուղղված պարտավորությունները (եթե համապատասխան պայմանավորվածություն է ծեռք բերվել), համաձայնեցված պատիժը և կասկածյալի (մեղադրյալի) համաձայնությունը՝ դրա նշանակմանը, ինչպես նաև՝ գործարքի պայմանների չկատարման հետևանքները:

Ի տարբերություն համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտի ռուսական տարբերակի՝ Ուկրաինայի մեղքի ընդունման վերաբերյալ գործարքը նախատեսում է կատարված հանցագործության համար սահմանված պատիժն վերաբերող հարցերի սակարկություն, մինչև անգամ՝ դրանից ազատում [20]:

Պարզեցված ընթացակարգն օգտագործվում է Ուկրաինայում հետևյալ պայմանների առկայության պարագայում՝

1. Մեղադրյալը «անվերապահորեն ընդունել է իր մեղքը» և չի վիճարկում նախաքննությամբ հաստատված հանգամանքները:

2. Տուժողը և մեղադրյալը համաձայն են իրենց բացակայությամբ գործի քննությանը:

3. Ղատախազի կամ քննիչի պարզեցված ընթացակարգ կիրառելու վերաբերյալ միջնորդության առկայությունը [21]:

Բելառուսում կիրառվում է համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտը՝ համաձայն անվանումով [22]: Ռուսաստանի Ղաշնության քրեական դատավարության օրենսգրքի 40¹ գլուխները և Բելառուսի Հանրապետության

յան քրեական դատավարության օրենսգրքի 49¹ գլուխները նման են՝ ինչպես տեքստի բովանդակությամբ, այնպես էլ՝ տեքստի շարադրությամբ: Այնուամենայնիվ, Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 49¹ գլուխն ընդգրկում է համագործակցության համաձայնագրի ինստիտուտի կիրառման առավել մանրամասն կարգավորումները [23]:

Ռուսաստանի Դաշնության օրենսդիր մարմնի կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտի ներդրման գաղափարի քննարկումը հիմնականում պայմանավորված է եղել այնպիսի միջազգային պայմանագրերի վավերացմամբ, որոնք պարտավորեցնում են անդամ երկրներին խթանել կազմակերպված հանցավորության դեմ պայքարին: Միջազգային կազմակերպությունների կողմից մշակվել են նորմեր, որոնք ուղղված են անդրասահմանային և կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ակտիվացմանը՝ դրանց անդամներին իրավապահ մարմինների հետ համագործակցության մեջ ներգրավվելու միջոցով:

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» 15.11.2000թ.ՄԱԿ-ի կոնվենցիայի 26-րդ հոդվածը պարտավորություն է սահմանում անդամ երկրների համար, ըստ որի՝ անհրաժեշտ է մշակել միջոցառումների շարք՝ քննչական մարմինների հետ կազմակերպված հանցավոր խմբերի անդամների համագործակցությունը խրախուսելու նպատակով, ներառյալ՝ արարքի համար պատժի մեղմացման և նրանց քրեական հետապնդման ենթարկելու իմունիտետ տրամադրելու վերաբերյալ օրենսդրական նորմերի մշակումը:

Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքում 40-րդ գլխի ներդրումը նշանակալի քայլ էր դիսպոզիցիոն սկզբունքները քրեական դատավարությունում ամրապնդողելու ուղղությամբ: Այն բանից հետո, երբ դատական քննության հատուկ ընթացակարգի ինստիտուտն ապացուցեց իր արդյունավետությունը, օրենսդիրը շարունակեց քրեական դատավարությունում համաձայնեցման վարույթների ներդրումը: 20.06.2009թ. թիվ 141-Փ 31 Դաշնային օրենքով ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում իր ամրագրումն է ստացել 40¹ գլուխը, որը հնարավորություն է նախատեսում մեղադրյալի հետ կնքել համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիր և վերջինիս նկատմամբ իրականացնել քրեական գործի հատուկ քննություն:

Մեղադրյալի կողմից օրենքով սահմանված պահանջերի պահպանման տեսանկյունից Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 40¹ գլխում ամրագրված նորմերի կիրառման պայմանները կարելի է տարանջատել պարտադիր և լրացուցիչ՝ ֆակուլտատիվ տեսակների: Ֆակուլտատիվ պայմանները չեն համարվում համագործակցության համաձայնագրի անբաժանելի մաս, և մեղադրյալի կողմից պարտադիր պայմանների կատարման դեպքում համաձայնագիրը չի խզվում:

Մեղադրյալի համար համագործակցության համաձայնագրի կնքման պարտադիր պայմաններ են համարվում՝

1. Ակտիվորեն օժանդակել հանցագործությունների քննությանը և բացահայտմանը, հանցագործության մյուս մասնակիցների մերկացմանը,

2. Համաձայնություն ներկայացված մեղադրանքի հետ:

Օրենսդրությունը նախատեսում է ընթացակարգային բնույթի մի շարք պահանջներ, որոնց պահպանումը համարվում է համաձայնագրի օրինականության կարևոր պայման:

Դրանք ներառում են.

1. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի կիսաժամանակավոր թույլատրելիությունը,

2. Համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի կնքումը պետք է լինի կամավոր և պաշտպանի մասնակցությամբ,

3. Համագործակցության համաձայնագրի կնքման կարևորագույն պայման է հանցագործության հանցակիցների բացահայտման նպատակով մեղադրյալի ակտիվ օժանդակությունը վարույթն իրականացնող մարմնին,
4. Համագործակցության համաձայնագրի կնքումը հնարավոր է միայն քրեական գործը նախնական քննության ձևով քննելու պարագայում: ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 40¹ գլխի դրույթները ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների նկատմամբ կիրառելու օրենսդրական արգելքներ սահմանված չեն,
5. Համագործակցության համաձայնագրի կնքումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե կասկածյալի (մեղադրյալի) կողմից իրավապահ մարմիններին ցուցաբերվող օժանդակությունը ունի կարևոր նշանակություն: Օժանդակության իրական անհրաժեշտության բացակայության պայմաններում նման համաձայնագրի կնքումը հակասում է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքում սույն ինստիտուտի ներդրման նպատակներին,
6. Մեղադրյալի համաձայնությունն առաջադրված մեղադրանքի հետ:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգավորումների վերլուծությունը ցույց է տալիս, որ համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը կարող է կնքվել ցանկացած քրեական գործով, որի մինչդատական վարույթն իրականացվում է նախնական քննության ձևով՝ անկախ քրեաիրավական որակումից և մեղսագրվող արարքի ծանրության աստիճանից: Այս ինստիտուտը կիրառվում է միայն այն հանցագործությունների քննության և բացահայտման համար, որոնք ունեն հասարակական լայն հնչելություն, բարձր հանրային վտանգավորության աստիճան և ամենակարևոր պայմանն այն է, որ քրեական գործի շրջանակներում վարույթն իրականացնող մարմնի կողմից ապացուցման ենթակա հանգամանքների բացահայտման այլընտրանքային եղանակներ առկա չեն [24]:

Համագործակցության համաձայնագրի մասնակիցների կողմից նախապես սահմանված պարտավորությունների կատարումը հիմք է հանդիսանում քրեական գործի քննության շրջանակներում հատուկ կարգով դատական միստ անցկացնելու և որոշում կայացնելու համար: Հատուկ ընթացակարգը կայանում է նրանում, որ դատարանը քրեական գործով ձեռքբերված ապացույցները չի ուսումնասիրում և գնահատում ընդհանուր կարգով (վկաները չեն հարցաքննվում, չեն ուսումնասիրվում փորձագիտական եզրակացությունները և այլն), կարող են հետազոտվել միայն ամբաստանյալի անհատականությունը բնութագրող հանգամանքները, ինչպես նաև՝ պատիժը մեղմացնող և խստացնող հանգամանքները: Արդյունքում, մեղադրական դատավճիռ կայացնելիս՝ ամբաստանյալի նկատմամբ նշանակվում է պատիժ, որը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված առավել խիստ պատժի կամ առավելագույն ժամկետի կեսը: Այն դեպքում, երբ հատուկ մասի համապատասխան հոդվածով նախատեսված է ցմահ ազատազրկում, ապա՝ պատժի այդ տեսակը չի նշանակվում:

Վերոնշյալի համատեքստում, կարելի է փաստել, որ Համագործակցության մինչդատական համաձայնագիրը բավականին լայն կիրառում ունի ինչպես հետխորհրդային երկրների, այնպես էլ՝ արտասահմանյան երկրների քրեական դատավարության համակարգում: Միաժամանակ, համագործակցության վարույթը և միջազգային պրակտիկայում կիրառվող վերջինիս անալոգները բավականին էական տարբերություններ ունեն միմյանցից, որոնք դրսևորվում են հետևյալ հարցերի շուրջ՝

- առարկան և հետապնդվող նպատակը,
- քրեական գործերի շրջանակը /հանցագործության տեսակները/, որոնց նկատմամբ կիրառելի է առանձնակի վարույթի այս տեսակը,

- համաձայնագրի կնքման շրջանակներում սակարկության ենթակա հանգամանքները,
- համաձայնագրի պայմանները,
- համագործակցության վարույթի կիրառման փուլերը,
- տուժողի մասնակցության խնդիրը

Համագործակցության վարույթի առարկայի հարցի վերաբերյալ գիտության մեջ ձևավորված միատեսակ կարծիք առկա չէ: Համաձայն Վ. Վ. Գորսկու և Մ. Վ. Գորսկու արտահայտած դիրքորոշման՝ համաձայնագրի առարկան մեղադրյալի գործողություններն են՝ առաջադրված պայմանների իրականացման շրջանակներում, իսկ Ն. Ս. Կոստենկոն որպես այդպիսի առարկա դիտում է քրեական պատասխանատվության իրականացման պայմանները: Մ. Ս. Գոլովինսկին կարծում է, որ համաձայնագրի առարկա է հանդիսանում կողմերի միջև համագործակցության իրականացման պայմանների քննարկումը, ինչպես նաև՝ կասկածյալի կամ մեղադրյալի և նրա հարազատների անվտանգության երաշխիքները:

Այլ տեսակետների համաձայն՝ համագործակցության մինչդատական համաձայնագրի առարկա են հանդիսանում այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել դրա պայմանների իրականացման շրջանակներում՝ մի կողմից, իսկ մյուս կողմից՝ պատիժը մեղմացնող հանգամանքները, ինչպես նաև՝ իրավապահ մարմինների կողմից մեղադրյալին և նրա հարազատներին տրամադրվող պետական պաշտպանության երաշխիքները:

Մեծ թվով հեղինակներ այս ինստիտուտի նպատակը կապում են հանցավորության դեմ պայքարի հետ, օրինակ՝ Ի. Է. Զվեչարովսկու կարծիքով, ի տարբերություն օտարերկրյա անալոգների, որոնց նպատակը մեղքի ընդունումն է, հանցավոր արարքի որակավորման և պատժաչափի վերաբերյալ համաձայնության գալը (մասնավորապես, նախատեսված է ԱՄՆ-ի, Իսպանիայի, Իտալիայի, Չեռմանիայի օրենսդրությամբ), ՌԴ-ում համագործակցության վարույթի ինստիտուտի ներդրման նպատակն է խթանել, նպաստել հետհանցավոր դրական վարքագծի դրսևորմանը:

Ըստ էության, գիտական գրականության մեջ առանձնացվում են համագործակցության մինչդատական համաձայնագրի կնքման պարագայում մեղադրող կողմի նպատակները՝

- հանցագործության կատարման հետ առնչող անձանց բացահայտում,
- նախկինում կատարված գրանցված և գաղտնի/լատենտային հանցագործությունների բացահայտում,
- նախապատրաստվող և կատարված հանցավոր արարքների բացահայտում և կանխարգելում,
- նպաստել հանցագործությամբ պատճառած վնասի հատուցմանը,
- հանցագործությանը առնչվող անձանց գտնվելու վայրի բացահայտում, ինչպես նաև՝ հանցավոր եղանակով ձեռք բերված գույքի հետախուզում.
- Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 73-ի հոդվածով նախատեսված հանգամանքների պարզում:

Համագործակցության միջնորդագիր ներկայացրած կասկածյալի կամ մեղադրյալի նպատակը պատիժը նվազագույնի հասցնելն է, կամ՝ դրա կրումից ազատվելը, ցմահ ազատազրկումից, մահապատժից խուսափելը:

Ըստ Լ. Գ. Տատիանինայի հիմնավորված կարծիքի՝ քրեական դատավարությունում «արդարադատության հետ կնքված գործարքը» ուղղված է քրեական դատավարության էության, նշանակության արդյունավետ իրականացմանը, նյութական և մարդկային ռեսուրսների ողջամիտ խնայողությանը, ինչպես նաև՝ հնարավորություն է ընձեռում կասկածյալին և մեղադրյալին օժանդակել քննչական և դատական մարմիններին՝ հանցագործության բացահայտման և քննության հարցում:

Ընդհանրացնելով քննարկվող դրույթները՝ գալիս ենք այն եզրահանգման, որ քրեական դատավարության իրավունքում համագործակցության վարույթի ինստիտուտի ներդրումն առաջին հերթին հիմնավորվում է «բարդ» հանցագործությունները բացահայտելու նպատակով կասկածյալին կամ մեղադրյալին իրավապահ մարմինների հետ համագործակցության ներգրավելու ցանկությամբ՝ վերջինիս նկատմամբ պետական պաշտպանության միջոցներ կիրառելու, քրեական պատժի ժամկետները նվազեցնելու կամ ազատազրկման հետ կապ չունեցող պայմանական պատժի նշանակման երաշխիքների տրամադրման դիմաց:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք համագործակցության վարույթը դիտարկել որպես դիսպոզիցիոն բնույթի քրեադատավարական ինստիտուտ, առանձին տեսակի պարզեցված վարույթ, որը կոչված է նպաստելու առավել հանրորեն վտանգավոր հանցավոր արարքների բացահայտմանը, և որի շրջանակներում քրեական հետապնդման ենթակա անձը՝ հանցագործության համար սահմանված պատժի մեղմացման դիմաց, մեղադրող կողմին տրամադրում է արժեքավոր տեղեկություններ՝ կատարված հանցագործության մեջ իր ունեցած դերի, հանցակիցների գործողությունների վերաբերյալ՝ միաժամանակ պարտավորվելով նպաստել հանցագործակցության հայտնաբերմանը, բացահայտմանը, քննությանը, համագործակցել քրեական հետապնդում իրականացնող մարմինների հետ:

Իրավակիրառ պրակտիկայի և գիտական գրականության ուսումնասիրության արդյունքներն ընդհանրացնելով՝ կարող ենք փաստել, որ չնայած թերություններին՝ համագործակցության վարույթը կարող է զարգացման լուրջ հեռանկարներ ունենալ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում: Անհրաժեշտ է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ այս ինստիտուտի էությունն է՝ կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարն ապահովելը, իսկ միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նման հանցագործություններից հասարակությանն ու պետությանը պաշտպանելու համար ավելի գործուն կառուցակարգեր դեռևս չկան:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագիծ, <https://www.e-draft.am/projects/2085/about> 29.05.21.
2. Аликперов Х. Д., Преступность и компромисс [Текст]. – Баку, 1992; Он же. Освобождение от уголовной ответственности [Текст]. – М.: Институт повышения квалификации руководящих кадров Генеральной прокуратуры Российской Федерации, 1999.
3. Аликперов Х. Д.; Зейналов М. А., Компромисс в борьбе с преступностью. [Текст]. М., 1999, стр. 46.
4. Тисен О. Н., Теоретические и практические проблемы Института досудебного соглашения о сотрудничестве в Российском уголовном судопроизводстве, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, Оренбург 2017, стр. 68.
5. Тисен О. Н., Теоретические и практические проблемы Института досудебного соглашения о сотрудничестве в Российском уголовном судопроизводстве, Диссертация на соискание ученой степени доктора юридических наук, стр. 55-56.
6. Stephanos Bibas, *Harmonizing Substantive-Criminal-Law Values and Criminal Procedure: The Case of Alford and Nolo Contendere Pleas*, CORNELL L. REV, 2003, p. 59-63.
7. Frank H. Easterbrook, "Plea Bargaining as Compromise," 101 Yale Law Journal 1969 (1992).

8. Lynch, Timothy, "The Case Against Plea Bargaining". Regulation, Vol. 26, No. 3, pp. 24-27, Fall 2003, <http://ssrn.com/abstract=511222> 30,05,21.
9. Апарова Т. В., Суды и судебный процесс Великобритании, Англия, Уэльс, Шотландия [Текст]. – М.: Институт международного права и экономики. – Издательство «Триада, Лтд, 1996. стр. 113.
10. Вернер Б., Уголовно-процессуальное право ФРГ [Текст]. – Красноярск, 2004. стр. 201 – 204.
11. Hellmann U. Strafprozessrecht. – Springer-Verlag, 2006. Rn. 996.
12. Брестер А. А.; Быковская А. С., Сравнительно-правовой анализ упрощенного производства в уголовном процессе России и Германии // Актуальные проблемы российского права. – 2015. – № 12. – стр. 163.
13. Иллюминати Дж., Построение состязательной модели уголовного процесса в Италии [Текст] // Уголовная юстиция: связь времен. Материалы международной научной конференции. Санкт-Петербург, 6 – 8 октября 2010 г. М., 2012. стр. 35.
14. YueMa. Prosecutorial discretion and plea-bargaining in the United States, France, Germany and Italy: a comparative perspective // Intern. Criminal Justice Rev. 2002. Vol. 12. № 1. p. 34.
15. Подробнее об этом см.: Ткачева Н. В., Уголовное судопроизводство зарубежных стран [Текст] : монография. Челябинск, 2006. стр. 238 – 240.
16. Тисен О. Н., указ. раб., стр. 83-84.
17. Правовые системы стран мира [Текст] / отв. ред. А. Я. Сухарев. М., 2001. стр. 216.
18. Ст. 190¹ УПК Республики Казахстан.
19. Хан В. Ю., Новая редакция Уголовно-процессуального кодекса Республики Казахстан: анализ нововведений // URL: <http://khanlawyer.kz/?p=681> 30,05,21.
20. Тисен О. Н., указ. раб., стр. 88.
21. Пушкар П. В., Сделка о признании вины в современном уголовном процессе: Сравнительно-правовое исследование [Текст] : дис. канд. юрид. наук. Киев, 2005.
22. Ст. 394 УПК Украины. 2 Уголовно-процессуальный кодекс Республики Беларусь от 16.07.1999 (с последующими изменениями и дополнениями) Минск, 2016.
23. Уголовно-Процессуальный Кодекс Республики Беларусь, Часть 5 ст. 4686.
24. Тисен О. Н., указ. раб., стр. 142.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

**Արտասահմանյան երկրների քրեական դատավարության իրավունքում համագործակցության վարույթի, դրա անալոգների կիրառման էությունն ու առանձնահատկությունները
Նոննա Մանուկյան**

Հոդվածում քննարկվում է արտասահմանյան երկրների քրեական դատավարության իրավունքում՝ որպես հանցավորության դեմ պայքարի արդյունավետ միջոցի՝ համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրի ինստիտուտի և դրա անալոգների ներդրման, կիրառման առանձնահատկություններն ու մշակակությունը, ինչպես նաև՝ վերջիններիս միջև եղած էական գաղափարական, դատավարական և ընթացակարգային տարբերությունները: Հոդվածում նաև մշակվել են համագործակցության վարույթի սահմանումը, ինչպես նաև համագործակցության վարույթի նկատմամբ կիրառվել է համակարգային վերլուծություն, իրականացվել է դրա մոդելավորումն ու տարանջատումը՝ իրավակիրառ պրակտիկայի, գիտական գրականության և միջազգային փորձի ուսումնասիրության հիման վրա:

РЕЗЮМЕ

Институт сотрудничества в уголовно-процессуальном праве зарубежных стран, суть и особенности использования его аналогов

Нонна Манукян

Ключевые слова: Сотрудничество, производство, юстиция, сделка, принятие вины, соглашение.

В статье рассматриваются назначение и особенности внедрения и применения в уголовно-процессуальном праве иностранных государств как эффективного средства борьбы с преступностью института досудебного соглашения о сотрудничестве и его аналогов, а также идеологические, процессуальные и процедурные существенные отличия между указанными явлениями. В статье также было разработано определение производства о сотрудничестве, а также проводится системный анализ производства о сотрудничестве, его моделирование и разграничение (классификация) на основе глубинного исследования правоприменительной практики, научной литературы и международного опыта.

SUMMARY

Cooperation Proceedings in the Criminal Procedure Law of Foreign Countries, the Essence and Peculiarities of the Use of its Analogues

Nonna Manukyan

Key words: collaboration, proceedings, justice, transaction, sin acceptance, agreement.

The article discusses the purpose and features of the introduction and application in the criminal procedure law of foreign states as an effective means of combating crime of the institute of pre-trial cooperation agreement and its analogues, as well as ideological, procedural and procedural significant differences between these phenomena. The article also developed a definition of cooperation proceedings, as well as a systematic analysis of cooperation proceedings, its modeling and differentiation (classification) based on in-depth research of law enforcement practice, scientific literature and international experience.